

## ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՍՈՎԻՆ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ԳՈՐԾՈՒՆ ԶՂՋԱԼՈՒՑ

### ԿԱՍՈ ՍՈՎՍԻՍՅԱԼ

Հայոց պետականության կայացման ներկա փուլում առանձնակի նշանակություն ունեն օրինականության և իրավակարգի ամրապնդումը, պետական և հասարակական անվտանգության ապահովումը, մարդու իրավունքների պաշտպանությունը: Արժարժված խնդիրների իրականացումը անխաբիաբար կապված է հանցագործությունների կանխարգելման, օրենքի հստակ կիրառման պահանջների արդյունավետ իրագործման հետ:

Հանցագործությունների կանխարգելման առումով թե՛ տեսաբան քրեագետների, թե՛ իրավակիրառողների շրջանում բուռն քննարկումների են արժանանում հանցագործությունից կանոփին հրաժարվելու ինստիտուտի արդյունավետության, դրա հստակ կիրառման և գործուն գղջալու ինստիտուտից տարանջատման հիմնախնդիրները<sup>1</sup>: Թե՛ գործուն գղջալու, թե՛ հանցագործությունից կանոփին հրաժարվելու ինստիտուտները կանոնակարգող նորմերը խրախուսական բնույթ ունեն, սակայն դրանց իրավական հետևանքները հեռու են նույնական լինելուց. հանցագործությունից կանոփին հրաժարված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, մինչդեռ գործուն գղջալու պարագայում, բացառությամբ ՀՀ քրեական օրենսգրքում հստակ մատնանշված դեպքերի, անձը ենթակա է քրեական պատասխանատվության և պատժի: Նման պարագայում գործուն գղջալու հանգամանքը ընդամենը գնահատվում է որպես հանցանք կատարած անձի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Ներկայացված ինստիտուտները տարբերակելու համար առաջին հերթին անհրաժեշտ է բացահայտել դրանցից յուրաքանչյուրի էությունն ու տարբերակիչ առանձնահատկությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 36-ի համաձայն՝

«1. Հանցագործությունից կանոփին հրաժարում է համարվում անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը:

2. Հանցագործությունն ավարտին հասցնելուց կանոփին հրաժարված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա՝ փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում...»:

<sup>1</sup> Տե՛ս **Александрова Н. С.** Деятельное рассказание и добровольный отказ от совершения преступления // «Вестник Самарской гуманитарной академии», 2008, № 1, էջ 47, **Гладких А. А.** Проблемы разграничения оснований освобождения от уголовной ответственности по статьям 31 и 75 УК РФ // «Известия Иркутской государственной экономической академии», 2002, № 3, էջ 74-78:

Գործուն զոջալու էությունը օրենսդրի կողմից բացահայտվում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 72-ը սահմանելիս. դրանում մասնավորապես նշվում է.

«1. Առաջին անգամ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղալականով, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը:

2. Այլ տեսակի հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվությունից ազատվում է միայն սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով հատկապես նախատեսված դեպքերում»:

Ներկայացված ձևակերպումներից հստակ հետևում է այն տարբերակված մոտեցումը, որը պետությունը դրսևորում է հանցագործությունից կամովին հրաժարվելու և գործուն զոջալու իրավիճակներում. առաջինի դեպքում հանցավոր վարքագիծ սկսած, սակայն այն կամովին դադարեցրած անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, անկախ իրավակիրառողի կամահայտնությունից, մինչդեռ երկրորդի պարագայում իրավակիրառողի դիրքորոշումից է կախված՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած և գործուն զոջում դրսևորած անձը կենթարկվի՞ քրեական պատասխանատվության, թե՞ ոչ: Գործուն զոջալու ինստիտուտի պարտադիր կիրառման պահանջ օրենսդրի կողմից սահմանված է միայն ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում հստակ մատնանշված դեպքերում (օրինակ՝ պատանդ վերցված անձին ազատ արձակելու, զենք, ռազմամթերք, պայթուցիկ սարքեր կամ նյութեր կամովին հանձնելու պարագայում): Ընդ որում, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների ճնշող մասի դեպքում, գործուն զոջալու հանգամանքը ընդամենը կարող է հաշվի առնվել պատիժ նշանակելիս՝ որպես ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 62-ում նախատեսված պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Բնական է, որ այս երկու ինստիտուտների այդքան տարբեր իրավական հետևանքների պարագայում առանցքային նշանակություն ունի դրանց հստակ տարանջատումը:

Հանցագործությունից կամովին հրաժարվելու և գործուն զոջալու ինստիտուտների՝ ՀՀ քրեական օրենսգրքում տեղ գտած ձևակերպումների համադրումը առաջին հայացքից ստեղծում է այն տպավորությունը, որ այս ինստիտուտների տարբերակումը որևէ դժվարություն չի ներկայացնում, քանի որ օրենսդիրը հստակ կանոնակարգում է, թե հանցավոր մտադրության իրականացման որ փուլում է հնարավոր կամովին հրաժարվել հանցագործությունից, և որ փուլում՝ դրսևորել գործուն զոջում:

Հանցագործությունից կամովին հրաժարում հնարավոր է միայն չավարտված հանցագործության պարագայում՝ հանցագործության նախապատրաստության կամ հանցավոր ծի փուլերում, մինչդեռ գործուն զոջալու ինստիտուտը կարող է տեղ գտնել նաև հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելու դեպքում:

Հանցագործության նախապատրաստության փուլում հանցավոր

վարքագծի կամովին, վերջնական դադարեցումը առավելապես դրսևորվում է պասիվ վարքագծով՝ հետագա հանցավոր վարքագծից ձեռնպահ մնալով, թեև հնարավոր է նաև ակտիվ վարքագծի դրսևորում՝ հանցանքի կատարման համար ձեռք բերված գործիքների, միջոցների ոչնչացում, հանցակցությամբ դրսևորող հանցագործության դեպքում՝ դրդիչի, օժանդակողի, կազմակերպչի կողմից իրավապահ մարմիններին հանցագործության մասին տեղեկացում և այլն<sup>2</sup>:

Հանցագործությունից կամովին հրաժարում հնարավոր է նաև հանցափորձի փուլում: Քրեագետների մեծ մասը<sup>3</sup> գտնում է, որ հանցագործությունից կամովին հրաժարում հնարավոր է միայն չավարտված հանցափորձի փուլում, երբ հանցավոր վարքագիծ դրսևորող անձը դեռևս չի իրականացրել հանցանքն հաջողությամբ ավարտին հասցնելու կամ հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները (անգործությունները): Հեղինակների այս խմբի կարծիքով, ավարտված հանցափորձի փուլում խոսքը միայն գործուն գղջալու, բայց ոչ թե հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտի առկայության մասին է:

Այլ կարծիք է արտահայտել Ա. Վ. Նաունովը, որի դիրքորոշման համաձայն՝ հանցագործությունից կամովին հրաժարում կարող է տեղ գտնել նաև ավարտված հանցափորձի փուլում՝ պայմանով, որ հանցանքի կատարմանն ուղղված գործողություն կամ անգործություն դրսևորող անձը դեռևս պահպանի հանրորեն վտանգավոր արարքի և հանրորեն վտանգավոր հետևանքների միջև առկա պատճառական կապի նկատմամբ վերահսկողությունը և կարողանա ազդել դրա զարգացման վրա ու կանխել հանրորեն վտանգավոր հետևանքները: Օրինակ՝ անձը հրդեհում է տունը, բայց որոշ ժամանակ անց վերադառնում և հանգցնում է մոլեգնող կրակը՝ դրանով իսկ կանխելով գույքի ոչնչացումը<sup>4</sup>:

Ա. Պ. Կոզլովան ևս առանձնակի կարևորում է ավարտված հանցափորձի փուլում կամովին հրաժարման ինստիտուտի ամրագրման անհրաժեշտությունը՝ նշելով, որ դա հանցանքը հաջողությամբ ավարտին հասցնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները (անգործությունները) կատարած անձի կողմից այդ արարքի հանրորեն վտանգավոր հետևանքները կանխելու կարևոր խթան կարող է լինել<sup>5</sup>: Ընդ որում, նման հնարավորությունը խիստ կարևորվում է նյութական հանցակազմով նկարագրվող հանցագործությունների պարագայում, երբ հանրորեն վտանգավոր հետևանքների կանխումն ունենում է սոցիալ-իրավական առանձնակի կարևորություն: Օրինակ՝ հանցավորը անձին սպանելու նպատակով վերջինիս դանդաղ ներգործող թույն է ներարկում (փաստացի կատարում է անձին կյանքից զրկելուն ուղղված բոլոր անհրաժեշտ գործողությունները), սակայն ո-

<sup>2</sup> Տե՛ս **Александрова Н. С.**, նշվ. աշխ., էջ 49:

<sup>3</sup> Տե՛ս «Уголовное право России. Общая часть». М., 2003, էջ 24, «Уголовное право. Общая часть». М., 2004, էջ 43:

<sup>4</sup> Տե՛ս **Наумов А. В.** Российское уголовное право: курс лекций. Общая часть. М., 2011, էջ 461-462, **Ուոլմի** Практика применения Уголовного кодекса Российской Федерации: комментарий судебной практики и доктринальное толкование. М., 2005, էջ 82-84:

<sup>5</sup> Տե՛ս **Козлов А. П.** Учение о стадиях преступления. СПб., 2002, էջ 314:

րոշ ժամանակ անց զղջալով՝ տուժողին հակաթույն ներարկում և դրանով կանխում տուժողի մահը: Թեև այս պարագայում պատճառական կապի զարգացումը ամբողջությամբ չի վերահսկվում հանցավորի կողմից, սակայն հեղինակի կողմից առավել կարևորվում է հանրորեն վտանգավոր հետևանքների կանխման հանգամանքը:

Ավարտված հանցափորձի փուլում հանցագործությունից կանոփին հրաժարվելու հնարավորության առկայությունը հավանություն է գտել նաև Տ. Ն. Դրոնովայի, Ն. Ս. Ալեքսանդրովայի, Ն. Ֆ. Կուզնեցովայի աշխատանքներում<sup>6</sup>:

Ներկայացված դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ ավարտված հանցափորձի փուլում կանոփին հրաժարվելու հնարավորության վերաբերյալ մոտեցումները միասնական չեն. հեղինակների մի խումբը ընդհանրապես բացառում է այդ փուլում կանոփին հրաժարման հնարավորությունը, մյուսները գտնում են, որ ավարտված հանցափորձի փուլում նման հնարավորություն կա՝ պայմանով, որ արարքի և հանրորեն վտանգավոր հետևանքի միջև առկա պատճառական կապի զարգացումը դուրս չի եկել հանցավորի վերահսկողությունից, մինչդեռ երրորդ խմբի ներկայացուցիչները կանոփին հրաժարման հնարավորությունը անմիջական կախվածության մեջ են դնում հանրորեն վտանգավոր հետևանքների կանխման գործոնից:

Կարծում ենք՝ առավել հիմնավոր է երրորդ խմբի ներկայացուցիչների արտահայտած մոտեցումը, քանի որ հանցագործությունից կանոփին հրաժարվելու ինստիտուտի առաքելությունը հանցանքը ավարտին հասցնելը, հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը հանցավորի կողմից կանոփին խափանելն է: Պատահական չէ, որ արևմտաեվրոպական մի շարք երկրների քրեական օրենսգրքերում ուղղակիորեն ամրագրված է, որ հանցագործությունից կանոփին հրաժարման ինստիտուտն առկա է այն դեպքերում, երբ հանցավոր վարքագիծ սկսած անձը կանխում է իր վարքագծի հետ պատճառական կապի մեջ գտնվող հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը:

Մասնավորապես, Իսպանիայի քրեական օրենսգրքի հոդված 16-ի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթակա չէ հանցանքը ավարտին հասցնելուց կանոփին հրաժարված և այն դադարեցրած, հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացմանը խոչընդոտած անձը, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա փաստացի կատարած արարքները այլ հանցագործություն են պարունակում»<sup>7</sup>:

Լեհաստանի քրեական օրենսգրքի հոդված 15-ի համաձայն՝ «Հանցափորձի համար պատժվելու ենթակա չէ նա, ով կանոփին հրաժարվել է արարքի կատարումից կամ կանխել է հանցակազմի հատկանիշ հանդիսացող հետևանքների առաջացումը»<sup>8</sup>:

Գերմանիայի քրեական օրենսգրքի համաձայն՝ «Հանցափորձի հա-

<sup>6</sup> Տե՛ս **Дронова Т. Н.** Понятие и признаки добровольного отказа от преступления. «Вестник Балтийского федерального университета им. И. Канта», 2011, вып. 9, էջ 123-130, **Александрова Н. С.** Указ. соч., էջ 51:

<sup>7</sup> «Уголовный кодекс Испании». М., 1998, с. 23.

<sup>8</sup> «Уголовный кодекс Республики Польша». Минск, 1998, с. 19.

մար չի պատժվում նա, ով կանոսվին հրաժարվում է արարքի հետագա իրականացումից կամ կանխում է դրա ավարտին հասցնելը: Եթե հանցագործությունը, անկախ հրաժարված անձի աջակցությունից, հասցվում է ավարտին, ապա նա ենթակա չէ պատժի, եթե կանոսվին և հաստատակամորեն ջանքեր է գործադրել այդ արարքը ավարտին հասցնելը կանխելու համար»<sup>9</sup>:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 36-ում կանոսվին հրաժարման ինստիտուտի ձևակերպումից հետևում է, որ հանցագործությունից կանոսվին հրաժարումը հնարավոր է անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելու դեպքում, այսինքն՝ կանոսվին հրաժարումը հնարավոր է թե՛ չավարտված, թե՛ ավարտված հանցափորձի փուլերում: Այնուհանդերձ, քրեագետների և իրավակիրառ մարմինների ներկայացուցիչների շրջանում այս ինստիտուտի կիրառման ժամանակ հնարավոր իրարամերժ տեսակետներից զերծ մնալու համար ճիշտ կլիներ ՀՀ քրեական օրենսգրքում հստակ ամրագրել, որ հանցագործությունից կանոսվին հրաժարումը հնարավոր է ոչ միայն այն դեպքերում, երբ հանցավորը վերջնականապես կանոսվին հրաժարվել է հանցանքը ավարտին հասցնելուց և դադարեցրել այն, այլև կանխել է հանցանքն ավարտին հասցնելը, հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը:

Նման ձևակերպման պարագայում հնարավոր կլինի նաև ավարտված հանցափորձի փուլում հստակ տարանջատել հանցագործությունից կանոսվին հրաժարվելու ինստիտուտը գործուն գղջալուց: Մասնավորապես, եթե հանցանքը հաջողությամբ ավարտին հասցնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները (անգործությունները) կատարած անձը կանոսվին դադարեցրել է հանցագործությունը և իր հետագա վարքագծով կանխել հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, ապա նման իրադրությունը պետք է զնահատել որպես հանցագործությունից կանոսվին հրաժարում: Այդ պարագայում հանցանք կատարած անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա փաստացի կատարածում այլ հանցակազմ կա:

Մինչդեռ, եթե հանցանքը հաջողությամբ ավարտին հասցնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները (անգործությունները) կատարած անձը իր հետագա վարքագծով կանոսվին փորձել է կանխել հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, սակայն դա նրան չի հաջողվել, ապա նման իրադրությունը պետք է զնահատել որպես գործուն գղջալ: Այդ դեպքում, հանցավոր վարքագիծ դրսևորած անձը ենթակա է քրեական պատասխանատվության և հանրորեն վտանգավոր հետևանքների կանխմանն ուղղված նրա ջանքերը պետք է զնահատվեն որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Ավարտված հանցագործության փուլում հանցագործությունից կանոսվին հրաժարումը բացառվում է, և խոսք կարող է լինել միայն գործուն գղջալու ինստիտուտի առկայության մասին: Այնուհանդերձ, եթե իրավա-

<sup>9</sup> «Уголовный кодекс ФРГ». М., 2000, с. 23.

բանական գրականության մեջ առաջանում են հակասություններ հանցագործության այս կամ այն փուլը գնահատելիս, ապա իրավակիրառ պրակտիկայում դժվարություններ են ստեղծվում հանցագործությունից կանոնվին հրաժարվելու և գործուն զղջալու ինստիտուտների տարբերակման հարցում:

Մասնավորապես, Տ. Ն. Դրոնովան նշում է, որ հանցագործությունից կանոնվին հրաժարում հնարավոր է ինչպես նյութական, այնպես էլ ձևական հանցակազմերի պարագայում, հատկապես այն դեպքերում, երբ ձևական հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ համարվող արարքը դրսևորվում է ժամանակային առումով տևական բնույթի գործողություններով (անգործությամբ): Լիովին համաձայն լինելով հեղինակի տեսական դիրքորոշմանը՝ այդուհանդերձ չենք կարող նրա ներկայացրած օրինակում տեսնել կանոնվին հրաժարման ինստիտուտի առկայություն: Նրա կարծիքով, եթե կաշառատուն պաշտոնատար անձի հետ նախապես ձեռք բերված համաձայնությամբ նրա աշխատասենյակում թողնում է կաշառքի գումարը, սակայն մինչ պաշտոնատար անձի վերադարձը զղջում և հետ է վերցնում այն, ապա կատարվածը պետք է դիտարկել որպես կաշառք տալուց կանոնվին հրաժարում<sup>10</sup>: Բանն այն է, որ ներկայացված իրավիճակում առկա է ոչ թե հանցափորձ, այլ ավարտված հանցագործություն, քանի որ թե՛ ՀՀ, թե՛ ՌԴ քրեական օրենսգրքերը կաշառք տալու հանցակազմը համարում են ավարտված կաշառքը առաջարկելու, խոստանալու կամ տալու պահից, հետևաբար՝ Տ. Դրոնովայի նկարագրած իրավիճակում խոսք կարող է լինել ընդամենը գործուն զղջալու մասին: Փաստացի տեղի է ունեցել հանցագործության փուլերի ոչ ճիշտ գնահատում, ինչն էլ հանգեցրել է հանցագործությունից կանոնվին հրաժարվելու և գործուն զղջալու ինստիտուտների շփոթմունքի:

Հանցագործության փուլերի գնահատման հարցում հակասական մոտեցումներ ավելի հաճախ հանդիպում են ավարտված և չավարտված հանցափորձերը տարանջատելիս: Այդ մասին նշել է նաև Ա. Ի. Սիտնիկովան, որի կարծիքով՝ «Չավարտված հանցագործությունների որակումը զուգակցվել և զուգակցվում է որոշակի դժվարություններով, որովհետև մի շարք դեպքերում բացակայում է հանցագործության նախապատրաստության և հանցափորձի, հանցափորձի և հանցավոր վարքագիծը կանոնվին ընդհատելու միջև ջրբաժանը»<sup>11</sup>: Կարծում ենք՝ նման իրավիճակ ստեղծվում է այն պատճառով, որ քննարկվող հարցի շուրջ օրենսդիրն իր մոտեցումը չի արտահայտել, ուստի այդ հասկացություններին տրվում է դոկտրինալ մեկնաբանություն:

Այսպես, նույն իրավիճակը հեղինակների մի խմբի կողմից գնահատվում է որպես ավարտված հանցափորձ, և բացառվում է այդ արարքից կանոնվին հրաժարումը, մինչդեռ մյուսները դա գնահատում են որպես չավարտված հանցափորձ: Օրինակ՝ Ա. Նաումովի կարծիքով, եթե հանցավորը սպանելու նպատակով հրազենից մեկ անգամ կրակում է տուժողի վրա,

<sup>10</sup> Стен Дронова Т. Н., *նշվ. աշխ.*, էջ 123-130:

<sup>11</sup> Ситникова А. И. Приготовление к преступлению и покушение на преступление. М., 2006, с. 132.

թեթև վիրավորում նրան կամ վրիպում, որից հետո հրաժարվում է հանցանքը ավարտին հասցնել և դադարեցնում է հետագա գործողությունները, թեև հնարավորություն ուներ ևս մի քանի անգամ կրակելու և հաջողությամբ ավարտին հասցնելու սկսված արարքը, ապա արարքը պետք է գնահատել որպես ավարտված հանցափորձ, և հանցավորին պետք է ենթարկել քրեական պատասխանատվության: Հանցանքն ավարտին հասցնելուն ուղղված գործողությունները նրա կողմից դադարեցնելը ընդամենը պետք է դիտվի որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք<sup>12</sup>: Նաուսովի կարծիքով, արարքում առկա է ավարտված հանցափորձ, քանի որ առաջին իսկ կրակոցն արձակելիս հանցավորը կատարել է իրենից կախված ամեն ինչ ցանկալի արդյունքին հասնելու համար և անձի կամքից անկախ հանգամանքներով է, որ տուժողը չի մահացել:

Մինչդեռ նույն իրավիճակը Վ. Ֆ. Կիրիչենկոն դիտում է որպես չավարտված հանցափորձ, որովհետև վերջինս կարծում է, որ հանցավորը ամեն ինչ չի արել ցանկալի արդյունքին հասնելու համար, սխալ է հաշվարկել կրակոցի արձակման անկյունը, քանու արագությունը և այլն, հետևաբար հանցավորը գիտակցել է, որ փաստացի կատարվածը չի կարող բավարար լինել իր դիտավորությամբ ընդգրկված հանցավոր արարքը ավարտին հասցնելու համար<sup>13</sup>: Փաստորեն, նման իրավիճակում հանցավորի կողմից հետագա գործողությունները կամովին դադարեցնելը, Կիրիչենկոյի կարծիքով, պետք է գնահատել որպես հանցագործությունից կամովին հրաժարում:

Բնական է, որ նման հակասական մոտեցումների առկայությունը առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, թե որ չափանիշը պետք է վճռորոշ լինի հանցափորձը ավարտված կամ չավարտված դիտելու համար: Մասնավորապես, հնարավոր են իրավիճակներ, երբ հանցավորի օբյեկտիվորեն կատարած արարքը արդեն իսկ բավական է ցանկալի հետևանքներ առաջացնելու համար, սակայն հանցավորը սուբյեկտիվորեն դրանք բավարար չի համարում: Հարց է առաջանում. նման իրավիճակը դիտենք որպես ավարտված, թե՞ չավարտված հանցափորձ: Թերևս առաջադրված հարցի պատասխանը կարող է տրվել միայն դրա օրենսդրական կանոնակարգման պարագայում:

Կարծում ենք՝ քրեաիրավական գրականության և իրավակիրառ պրակտիկայում նման հակասություններից խուսափելու լավագույն տարբերակը կլինի ՀՀ քրեական օրենսգրքում ավարտված և չավարտված հանցափորձերի հասկացությունների տրվելիք սահմանումը: Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքում պետք է նախատեսել. «Հանցափորձը համարվում է չավարտված, եթե հանցավորը կարծել է, որ դեռևս չի իրականացրել հանցագործությունը հաջողությամբ ավարտին հասցնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները (անգործությունները): Հանցափորձը հա-

<sup>12</sup> Տե՛ս **Наумов А. В.** Российское уголовное право: курс лекций: в 3 т. 1: Общая часть М., 2011, 461, «Уголовное право России: Часть Общая». М., 2005, էջ 248:

<sup>13</sup> Տե՛ս **Кириченко В. Ф.** Значение ошибки по советскому уголовному праву. М., 1952, էջ 91:

մարվում է ավարտված, եթե հանցավորը կարծել է, որ իրականացրել է հանցագործությունը հաջողությամբ ավարտին հասցնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները (անգործությունները), սակայն հանցագործությունն ավարտին չի հասցվել նրա կամքից անկախ հանգամանքներով»:

Վերը ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ հանցագործությունից կանոփին հրաժարումը կարող է արձանագրվել հանցագործության նախապատրաստության, չավարտված հանցափորձի, իսկ առանձին դեպքերում՝ նաև ավարտված հանցափորձի փուլերում, մինչդեռ գործուն գղջալու ինստիտուտը կարող է տեղ գտնել այն դեպքերում, երբ կանոփին հրաժարման ինստիտուտին վերաբերող դրույթները այլևս կիրառելի չեն, այն է՝ ավարտված հանցագործության և ավարտված հանցափորձի փուլերում:

Ինչպես հանցագործության փուլերից, այնպես էլ հանցագործությունից կանոփին հրաժարվելու և գործուն գղջալու տարանջատման համար կարևոր նշանակություն ունի նաև այն վարքագիծը, որը անձը դրսևորում է հանցավոր վարքագծի ընթացքում: Հանցագործությունից կանոփին հրաժարվելու պարագայում հանցավորի վարքագիծը առավելապես դրսևորվում է պասիվ վարքագծով՝ հանցանքի կատարման ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելով, մինչդեռ գործուն գղջալու պարագայում հանցավորը առավելապես դրսևորում է ակտիվ վարքագիծ՝ կանոփին ներկայանում մեղայականով, աջակցում հանցագործության, հանցակիցների բացահայտմանը, ապացույցների ձեռքբերմանը, հարթում կամ հատուցում է տուժողին պատճառված վնասը և այլն:

Այս երկու ինստիտուտների տարբերակման համար կարևոր նշանակություն ունի նաև այն հարցի պարզաբանումը, թե դրանց նախատեսման ժամանակ օրենսդիրը քրեական քաղաքականության իրականացման որ խնդիրներն է ցանկացել լուծել: Ակնհայտ է, որ հանցագործությունից կանոփին հրաժարվելու դեպքում նման խնդիրներ են հանցագործությունների կանխարգելումը և խափանումը, մինչդեռ գործուն գղջալու ինստիտուտի պարագայում առաջադրված խնդիրների լուծումը թվում է ոչ իրատեսական<sup>14</sup>: Թերևս, օրենսդրի կողմից այս ինստիտուտի նախատեսման հիմնական նպատակն է եղել հանցագործության բացասական հետևանքների չեզոքացումը կամ նվազեցումը, ինչ-որ առումով՝ նաև հանցագործությունների բացահատմանն ու քննությանն ուղղված պետական ռեսուրսների տնտեսումը:

Քննարկվող ինստիտուտների տարբերակման հիմքում դրված են նաև այն սուբյեկտիվ գործոնները, որոնք հանգեցրել են հանցանք կատարող անձի կողմից հանցավոր վարքագծի դադարեցման կամ արդեն իսկ կատարված հանցանքի պարագայում՝ դրա հետևանքների չեզոքացման: Հանցագործությունից կանոփին հրաժարվելու առկայության համար անհրաժեշտ է, որ անձը, սեփական կամահայտնությամբ, վերջնականապես, գիտակցելով հանցանքը հաջողությամբ ավարտին հասցնելու հնարավոր

<sup>14</sup> Стів Гладких А. А. Проблемы разграничения оснований освобождения от уголовной ответственности по статьям 31 и 75 УК РФ // «Известия Иркутской государственной экономической академии». 2002, № 3, էջ 78:



րությունը, դադարեցնի իր հանցավոր գործունեությունը: Ընդ որում, քրեագետները համակարծիք են, որ կամովին հրաժարման պարագայում նման որոշում ընդունելու վրա ազդած շարժառիթները նշանակություն չունեն, այսինքն՝ դրանք կարող են դրսևորվել տուժողի կամ իր ընտանիքի անդամի հանդեպ հանցավորի խղճահարությամբ, պատժի նկատմամբ վախով և այլն: Ավելին, նշանակություն չունի նաև այն, թե ով է կամովին հրաժարվելու նախաձեռնողը՝ հանցավորը, նրա ընտանիքի անդամը, թե՞ երրորդ անձը: Կարևորն այն է, որ հանցավոր վարքագիծը դադարեցնելիս հանցավորը գիտակցի հանցանքը հաջողությամբ ավարտին հասցնելու հնարավորությունը և սեփական կամահայտնությամբ այն դադարեցնելու որոշում կայացնի:

Մինչդեռ գործուն զղջալու շարժառիթների առումով քրեագետների կարծիքները չեն համընկնում: Մասնավորապես, Ն. Ս. Ալեքսանդրովան գտնում է, որ գործուն զղջալու շարժառիթի ձևավորման հիմքում ընկած են բարոյական, արժեքաբանական մղումները<sup>15</sup>, իսկ Ա. Ա. Գլադկիխի կարծիքով, ինչպես և հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում, գործուն զղջալու պարագայում ևս նման վարքագիծ դրսևորելու շարժառիթները կարող են պայմանավորված լինել ոչ միայն վեհ, բարոյական, այլև նեղ անձնական դրդումներով<sup>16</sup>: Կարծում ենք՝ պետք է համաձայնել վերջին տեսակետին, քանի որ ՀՀ քրեական օրենսդրությունը որևէ պահանջ չի ներկայացնում գործուն զղջում դրսևորող անձի բարոյական կերպարի և շարժառիթների վերաբերյալ, հետևաբար՝ գործուն զղջալու պարագայում ևս դրանց հիմքում կարող են լինել մեղմ պատժի ենթարկվելու, առանձին դեպքերում՝ պատասխանատվությունից խուսափելու մղումները:

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս վեր հանելու այն հիմնական տարբերակիչ գործոնները, որոնք առանցքային կարևորություն ունեն հանցագործությունից կամովին հրաժարումը գործուն զղջալու ինստիտուտից սահմանազատելու համար: Դրանք են.

1. Հանցագործությունից կամովին հրաժարումը հնարավոր է հանցագործության նախապատրաստության, չավարտված հանցափորձի, մասամբ նաև՝ ավարտված հանցափորձի փուլերում, մինչդեռ գործուն զղջալու ինստիտուտը կարող է դրսևորվել ավարտված հանցագործության, իսկ առանձին դեպքերում՝ ավարտված հանցափորձի փուլերում:

2. Հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում հանցավորի վարքագիծը հիմնականում դրսևորվում է պասիվ վարքագծով, մինչդեռ գործուն զղջալու պարագայում՝ առավելապես ակտիվ վարքագծով:

3. Հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտը նախատեսելու օրենսդրի նպատակը հանցագործությունների խափանումն է և կանխարգելումը, մինչդեռ գործուն զղջալու ինստիտուտի պարագայում՝ հանրորեն վտանգավոր հետևանքների չեզոքացումը, հանցագործությունների բացահատմանն ու քննությանը ուղղված պետական ռեսուրսների տնտեսումը:

<sup>15</sup> Տե՛ս Александрова Н. С., նշվ. աշխ., էջ 47:

<sup>16</sup> Տե՛ս Гладких А. А., նշվ. աշխ., էջ 78:

4. Հանցագործությունից կանուլին հրաժարված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, մինչդեռ գործուն զղջալու պարագայում հանցավորը ենթակա է քրեական պատասխանատվության՝ բացառությամբ ՀՀ քրեական օրենսդրությամբ հստակ նախատեսված դեպքերի:

**Բանալի բառեր** – *հանցագործությունից կանուլին հրաժարվել, գործուն զղջալ, ավարտված հանցափորձ, չավարտված հանցափորձ, քրեական պատասխանատվություն, շարժառիթ, իրավական հետևանք*

**КАМО МОВСИСЯН – Разграничение добровольного отказа от преступления и деятельного раскаяния.** – В науке об уголовном праве и правоприменительной практике часто возникают разногласия относительно критериев разграничения институтов добровольного отказа от преступления и деятельного раскаяния. Будучи поощрительными нормами уголовного законодательства, оба института имеют общности, особенно на стадии оконченного покушения на преступление. Однако они отличаются правовыми последствиями их применения, а также задачами, которые им предстоит решить.

Учитывая проблематичность разграничения данных институтов, в статье анализируются особенности и условия их применения и уточняются критерии их разграничения.

**Ключевые слова:** *добровольный отказ от преступления, деятельное раскаяние, оконченное покушение, неоконченное покушение, уголовная ответственность, мотив, правовое последствие*

**КАМО МОВСИСЯН – The Differentiation of Voluntary Renunciation from Active Repentance.** – In the Criminal law science and law-enforcement practice there is no unified approach in regard to the distinguishing criteria for the institutions of voluntary renunciation and active repentance. Both of these institutions have incentive character, thence having a lot in common. The generalities occur especially on the stage of completed attempt. However, they also differ based on the legal consequences of their implementation and the tasks they are aimed to solve.

Having in mind the difficulty of differentiation of these institutions, the author analyzes the peculiarities and conditions of implementation of these institutions, specifies criteria for their differentiation, expresses his vision for improving the criminal legislation from the perspective of solving the task set.

**Key words:** *Voluntary renunciation, active repentance, completed attempt, uncompleted attempt, criminal responsibility, motive, legal consequence*